

է 'ի քաղաքի՝ որուն հետ եւ դուք ձեռն 'ի դործ կ'լինիք դրամ պահ-
րաստել եւ զրկել մեզ ունեցած գրամմիս միայն 200) ք • է : Կարգէն հա-
ւաքել էի 300 բուրլի առ այժմ չպիտի յաջողի : զի հանգանակող Ազ-
նաւորեանն գնաց 'ի Կարին :

Առ Ձեզ զրկած պաշտօնական նամակաց պատճէները կը յուսամ որ
ցարդ ստացած կ'լինիք :

Անցեալ աւուր զրկածդ գործիքներ ստացան , չնորհակալ եմ :

Անւոյ Մայր-եկեղեցին վաղեան օրը մաքրելէն կը լմնամք, կաշկան
զրկեցինք Ձեր քով , որոյ վրայ դնելու զրկելու էք պօնկաներ , որպէս-
զի շինութեան հիմնարկութիւն ընեմք , այն հիմնարկութիւն , որուն
խկի պիտի չ'հաւատայ յուսահատ Անին իւր հինգ հարիւր տարուան
կրած տառապանքների փորձառութեամբ , իսկ հայեր թող հաւատան ,
որ Աստուած 'ի ձեռն տկարաց հզօրագոյնս կը գործէ :

Առաջնորդ Կարուց եւ

Վանահայր Վանօրէից Անւոյ՝

6 Օգոստոս՝ 1879

Գ. Նպ. Ազուանեանց

'ի Ղօշավանք :



ԿՐՕՆԱԿԱՆ ԱՂԱՆԴ ՄԸ ՓՈԲՐ ԱՍԻՈՅ ՄԷՋ

ԳՐԶԸԼ-ՊԱՇՆԵՐԸ

Փոքր-Ասիոյ մէջ գոյութիւն ունի կրօնական կարեւոր ազանդ մը,
որուն անգամները՝ ցրուուած էր զբուռն մինչեւ Սյառն՝ ոռակօրէն կը
կոչուին Գրզըլ-Պաշ եւ որ ինքզինքնին կանուանեն Ալէվի : Իրենց
արարողութիւնները եւ հաւատալիքները կը պահեն ամենամեծ գաղտ-
նիքով եւ խորհրդաւորութեամբ , որով անկտրելի եղած է մինչեւ հիմա
թափանցել անոնց : Ոմանք քիւրտ են , ուրիշներ՝ մեծամասնութեամբ՝
թուրք , եւ կը խօսին մի միայն թուրքերէն : Այս վերջինները Սիւննի
կոչուած թուրքերէն արտաքինապէս կը տարբերին մի միայն իրենց մօ-
րաքին ու մագերուն կտրելու ձեւովը . գլուխնին չեն անիւրի , եւ փո-
խանակ մօրուքնին կտրել տալու , յաճախ կը ձգեն զայն անիւ ազատօ-
րէն : Ասկէ զատ՝ ինքզինքնին կանուանեն Միւսիւլման-Սիւննի : Կը
ժխտեն Գրզըլ-պաշ կամ Ալէվի ըլլալին , իսկ երբ պարտաւորուին ըն-
դունիլ , կա զանազան թէ՛ իրենք նուազ հաւատարիմ աշակերտներ չեն

Մուհամէտ մարգարէին: Միւսիւման վկաներու առջեւ յայտնի կերպով կընեն Գուրանի հրամայած ազօթքները: Իրենց մէջէն անոնք որոնք վատանգելիք բան մը ունին, — պետերն, եւ հարուստները, — մասնաւորապէս աւելի զգոյշ են իրենց լեզուին ու ընթացքին մէջ: Օր մը երբ Ահմէտ էֆէնտի կոչուած մէկէ մը (որ Տիվրիկի եւ Տարէնտէի մէջ հաստատուած Գուրուլմաք զիլզաքաղաքէն Գըզըլ-պաշ պետ մըն էր) տեղեկութիւն կառնէի եւ երբ կը հարցնէի թէ Ալէվի՞ էր ինքը, խօսակիցս որ բուն Գըզըլ-պաշ մըն էր, պատասխանեց ժպտելով. «Օ՛հ, ասիկա շարթուան օրերէն կախում ունի:»

Գըզըլ-պաշները սովորաբար ու երբ վախնալիք բան մը չունին ոչ ազօթք կընեն եւ ոչ լուացում (սպէսք). գինի կը խմեն եւ ըրամազանի կարեւորութիւն չեն տար: Նոյն իսկ մզկիթ չունին. կամ թէ իրենց անասուններն ու արմատիքը կը դնեն անոնց մէջ զորս կառավարութիւնը ստիպած է շինել: Անոնցմէ երեք չորրորդը չեն թլփատուիր եւ երիտասարդ գինուորները կը թլփատուին իրենց գինուորութեան գացած պահուն. կառավարութեան կողմանէ: Շատ անգամներ ինքզինքնին Պէք-թաշի կոչելով կը փորձեն բացատրել այն ցայտուն հակասութիւնը որ կայ իրենց գործերուն ու իսլամ անուանուելուն մէջ:

Պէք-թաշները խիստ բազմաթիւ ամբողջ օմանեան կայսրութեան եւ մասնաւորապէս Բումէլիի մէջ, արգարեւ Գըզըլ-պաշներու պէս մասնաւոր յարգանք մը ունին Ալի՛ն համար: Կրսեն թէ նա անբաժանելի է Մուհամէտ մարգարէէն որ անոր հոգին եւ մարմինն է, որ վերջին մարգարէն է եւ վերջին Խալիֆան. ի պատիւ անոր մարտիրոս դաւանելը ունի Հասանի եւ Հիւսէյնի՝ սուգ կընեն եւ Մուհարէմի առաջին օրերուն ծով կը պահեն: Մինչդեռ իբրեւ օրինաւոր Խալիֆա կը ճանչնան Ապու-Պէքիրը, Օմարը եւ Օմանը, ու այսպիսով կը համաձայնին Սիւննիներուն հետ: Նոյնպէս ինքզինքնին պարտական չեն զգար կառնաւորապէս ընել ամենօրեայ հինգ ազօթքները ու լուացումները, եւ ոչ ալ պանել ըրամազանի ծովը: Երբեք հաւատար, կրսեն Աստուծոյ հանդէպ մեր ունեցած պարտականութիւններէն ազատած ըլլալ, որոշեալ ժամերու մէջ ցուցամուկան եւ հրապարակային ազօթքներ արդելով անոր: Իրեն ներկայանալու համար պէտք է պատրաստուիլ երկար ժամանակ: Նա պէտք չունի մեր ազօթքներուն օւթէ մենք կազօթենք, մեզի՛ համար է այդ ամբացնելու ու բարեքնելու համար մեր հոգին Պէտք եղած բուն ճեւղեր պարտութիւններ ու գործողութիւններ չեն, հապա՞ օրաի մաքրութիւնը ու հաւատքի անկեղծութիւնը: Ուրեմն ասոնք տեսակ մը բողոքականներն են իսլամութեան Բայց որքան ալ մեծ տեսնուին այս անհամաձայնութիւնները որ զիրենք կը զատեն ուղղադաւաններէ, հերձուած կոչուելու աստիճանի: չեն հասնիր, չեն քննարկուիր հաստատ եւ ճկուն միութիւնը խառնու:

խեանք մարդարէին կանանց վերաբերուին ծածկէ հաւատարապէս Պէշ-
րաշիններն ու միւս հաւատաքեալները :

Արդ խնդիրը նոյնը չէ Դըզըլ-պաշներուն համար : Միւսիւլմաններ-
ը զանոնք իրենց եղբայր չեն ճանչնար կատեն, թէպէտեւ անոնց մասին
առատ պէտքերն եւ շատ ազատ տեղեկութիւններ միայն ունին : Կարե-
ւորութիւն չեն տար : զանոնք զուրա կը ձգեն՝ կարելի եղածին չափ
վարչական պաշտօններէ, եւ եթէ ընդհանուր կերպով գէշ չեն վար-
ուիր, պատճառը անոնց վախի՞տ ու հնազանդ ըլլալնն է : եւ մեծամաս-
նութեամբ խիստ թշուառութեան մէջ ձգուած են : Դրեթէ Գըզըլ-պաշ-
ներու մէջ ձէրսի մի անհնազանդ պետերն են միայն որ պահած են ըն-
դարական կարեւոր դիրք մը :

Գըզըլ-պաշները չեն վերաբերիր ուրեմն իսլամական ընտանիքին :
Իմ մասնաւոր խաղարկութիւններս թոյլ կուտան ինձ հաստատելու որ աղ-
ետուած Քրիստոնէական աշանդի մը կը վերաբերին, շատ նման Սու-
րիայի Նուայրիններուն : Սոսնք Պալականտանի միւսիւլմաններէն փոխ
առած են Ալիի աւանդալէպն ու անունը, եւ զայն կը գործածեն իբրեւ
դիմակ Շիւիներուն պէս՝ Մուհարէմի ապաջին տասներկու օրերը ծոմ
կը պահեն եւ կուլան Հասանի եւ Հիւսէյնի մանր ծայրայեղ Շիւիներու
նման : Ալին կը նկատեն իբրեւ մարմնացած եւ մարդացած Աստուած :
Բայց, անկից առաջ, Աստուած աշխարհքի մէջ ինքզինքը յայտնած էր
աարբեր ժամանակամիջոցներու մէջ, մարդկային կերպարանքի տակ,
եւ զարմեալ պէտք է երկու վերջին ժամանակին : Իր անձնաւորութիւն-
ներուն բազմութիւնը արգելք մը հղած է ճշմարիտ հաւատքին տա-
րածման : Այս մասին Դըզըլ-պաշները հետեւեալ տողերը կարտասանեն,
հաւանականաբար իրենց կրօնական գրքէն առնուած(1) :

Պին պիր քիսվէթտէն պաշ կէսթէտիւր,
Պիր քիսվէթտէ պաշ կէսթէրսէ լաի
Ճիւմլէսի կէլէճէք իտի իմանա :

Հպարտ եւ մէկ ձեւերով երեւցաւ երեւցած ըլլաւ, ամ-
ր ուղիւստի հաւատքի պիտի զար :

Ալիէն առաջ Աստուծոյ այդ մարմնաւորութիւններուն գլխաւորը Յի-
սուպ-Քրիստոսն է : Որդին եւ Բանն Աստուծոյ, փրկիչն աշխարհի, այն
որ կը բարեխօսէ Հօր մօտ մեղաւոր մարդկութեան համար, այն որ պա-
րապ տեղը վկայութեան չի բերուիր եւ որ ներկայ է ամէն տեղ երբ
զայն կանչենք :

(Շատուանիկի)

Յ. ԿՐԸՆԱՅ
Թարգմ. Մ. Յ. ՊԵՐՊԵՆՆ

(1) Գըզըլ-պաշներն արդարեւ ինձ ըսին մասնաւոր դիրք մը ունե-
ցած ըլլալնն : Բայց չկրցի ոչ զայն ձեռք ձգել, ոչ ալ նոյն իսկ անոր
անունը գիտնալ : (Մ. Հ.)